ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 մարտի 2016 թվականի N 30 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ <<ԲԵՐԴԻ ՎԱՐԺԱՐԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2002 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԹԻՎ 47 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» ենթակետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի թիվ 1392 որոշման 6-րդ կետով

որոշում եմ.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի «Բերդի վարժարան պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը նոր խմբագրությամբ:
2. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի «Բերդի վարժարան պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել նոր խմբագրությամբ հաստատված կանոնադրության պետական գրանցումը:
3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2002 թվականի հոկտեմբերի 31-ի <<Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդի վարժարան պետական հանրակրթական ուսումնական հաստատություն>> պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը հաստատելու մասին թիվ 47 որոշումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Հ. ԱԲՈՎՅԱՆ

10 մարտի 2016թ.
ք. Իջևան